ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ
(2018 և 2019 ԹԹ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ)

ԵՐԵՎԱՆ
2020

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրի ղեկավար՝ Արմենուհի Բուռնազյան

Ուսումնասիրության իրականացնող՝ Աստղիկ Ավչյան

Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ

www.policyobserver.am

www.facebook.com/PolicyObserver/

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են պետական մարմինների կողմից իրականացված գնումները 2018 և 2019 թվականների հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում: Ուսումնասիրությունը կենտրոնացել է ներկայացուցչական բնույթ կրող ծախսերի վրա, որոնք հիմնականում առնչվում են Ամանորյա հանդիսությունների և միջոցառումների, տարբեր հյուրասիրությունների և ճաշկերույթների կազմակերպմանը, պաշտոնական պատվիրակությունների ընդունելության հետ կապված տարբեր ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև հուշանվերների, կոնյակների, ծաղիկների և ժամացույցների ձեռքբերմանը:

Հիմնվելով գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների և մամուլում ներկայացված պաշտոնական տեղեկատվության վրա՝ մեր ուսումնասիրության արդյունքներով Ամանորյա տոնական ձևավորման, հանդիսավոր արարողությունների և միջոցառումների կազմակերպման համար 2018թ. և 2019թ. պետական մարմինները հատկացրել են համապատասխանաբար մոտ 162.5 մլն և 330.9 մլն դրամ: Ի դեպ, 2018թ դեպքում վերոնշյալ գումարը չի ներառում Երևանի Քաղաքապետարանի կողմից նոր գլխավոր տոնածառի ձեռքբերման և տեղադրման ծախսերը, որոնք վճարվել են Էրեբունի-Երևան տոնակատարությունների հիմնադրամի խնայողություններից և կազմել են 85 մլն դրամ:

2019թ ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնումները հիմնականում իրականացվել են գնանշման հարցմամբ (ԳՀ) և մեկ անձ (ՄԱ) ընթացակարգերով (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման համար ծախսերը 2019թ.

Պատվիրատուի անվանումը	**Ընտրված մասնակից**	**Գնման ընթացակարգ**	**Գնման առարկայի անվանում**	**Պայմանագրի գումարը (մլն. դրամ)**
Երևանի Քաղաքապետարան	Ֆակտորի Փրոդաքշն ՍՊԸ	ՄԱ	Ամանոր 2020 Ամանորյա տոներին նվիրված մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցում	137.9
Երևանի Քաղաքապետարան	Սթեյջ Սթայլ	ՄԱ	Ամանորին ձևավորման աշխատանքների ձեռքբերում	66.7
Երևանի Քաղաքապետարան	Հաէկ-ի շինարարություն	ՄԱ	Ամանորյա տոներին նվիրված Ամանոր 2020 մշակութային միջոցառումների	29.9

			շրջանակներում կոնստրուկցիաներով ժամանակավոր վերգետնյա անցում պատրաստելու աշխատանքներ	
Պաշտպանության նախարարություն	Արասո ՍՊԸ	ԳՀ	երեխաների համար միջոցառումների կազմակերպման անցկացման ծառայություններ	14.8
Ոստիկանություն	Անդրանիկ Խաչատրյան ԱՁ	ԳՀ	Ամանորյա միջոցառման խաղերի ձեռքբերում	7.8
Երևանի Քաղաքապետարան	Գրանդ Քենդի ՍՊԸ	ԳՀ	Քաղցրավենիքի, նվեր փաթեթների ձեռքբերում	5.7
Աշտարակի համայնքապետարան	Մինորա մշակությժային կենտրոն ՍՊԸ	ԳՀ	տոնածառի լույսերի և զարդարանքի զանազան պարագաների ձեռքբերում	5.4
Երևանի Քաղաքապետարան	Գրանդ Քենդի ՍՊԸ	ԳՀ	Քաղցրավենիքի, նվեր փաթեթների ձեռքբերում	5.4
Երևանի Քաղաքապետարան	Գրանդ Քենդի ՍՊԸ	ԳՀ	Քաղցրավենիքի, նվեր փաթեթների ձեռքբերում	5.4
Աշտարակի համայնքապետարան	Ման Արթ	ԳՀ	տոնածառի լույսերի և զարդարանքի զանազան պարագաների ձեռքբերում	5.3
Երևանի Քաղաքապետարան	Պեggn	ԳՀ	Ամանորյա ձևավորման և միջոցառումների կազմակերպման ծառայություններ	5
Ոստիկանություն	Կառոլ ՍՊԸ	ԳՀ	Ամանորյա միջոցառման քաղցրավենիքի ձեռքբերում	4.9
Չարենցավանի Համայնքապետարան	Blockchainhost	ԳՀ	Տոնածառ (հավաքական մեկ միավոր, լույսերով, զարդարանքներով)	4.5

Ծաղկաձորի համայնքապետարան	Ֆիտոլայթ ՍՊԸ	ԳՀ	Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ամանորյա տոնական լույսերի ձեռքբերում	4
Աշտարակի համայնքապետարան	Անթանյան Շին	ԳՀ	տոնածառի լույսերի և զարդարանքի զանազան պարագաների ձեռքբերում	3.5
Երևանի Քաղաքապետարան	Գրանդ Քենդի ՍՊԸ	ԳՀ	Քաղցրավենիքի փաթեթների ձեռքբերում	3.4
Երևանի Քաղաքապետարան	Գրանդ Քենդի ՍՊԸ	ԳՀ	Քաղցրավենիքի, նվեր փաթեթների ձեռքբերում	3.3
Սևանի համայնքապետարան	Կոնցեպտ Իվենթս	ԳՀ	Սևան համայնքի փողոցների ամանորյա տոնական զարդարման ծառայություններ	3.3
Ոստիկանություն	Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն ՊՈԱԿ	ԳՀ	երեխաների համար միջոցառումներ կազմակերպման-անցկացման ծառայություններ	3.2
Երևանի Քաղաքապետարան	ԱՁ Մարինե Լուլումջյան Միհրանի	ԳՀ	Ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայություն	2.9
Երևանի Քաղաքապետարան	Գրանդ Քենդի ՍՊԸ	ԳՀ	Նվեր փաթեթների ձեռքբերում	2.6
Երևանի Քաղաքապետարան	Բիլզարդ ՍՊԸ	ՄԱ	Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում կայանալիք Ամանորյա պաշտոնական ընդունելության ծառայություններ	2.1
Երևանի Քաղաքապետարան	Կոնցեպտ Իվենթս	ԳՀ	Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներ	1.7
Երևանի Քաղաքապետարան	Գրանդ Քենդի ՍՊԸ	ԳՀ	Քաղցրավենիքի, նվեր փաթեթների ձեռքբերում	0.7
Չարենցավանի համայնքապետարան	Վարալ ՍՊԸ	ԳՀ	Ամանորյա տոպրակներ (պարկիկներ)	1.1

Երևանի Քաղաքապետարան	Գրանդ Քենդի ՍՊԸ	ԳՀ	Քաղցրավենիքի, նվեր փաթեթների ձեռքբերում	0.4
Ընդամենը				**330.9**

2019թ ընթացքում ամանորյա նվեր փաթեթների ձեռքբերման համար հատկացվել է 33 միլիոն դրամ:

2018թ. ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման ծառայությունների գնումները դիտարկվող ժամանակահատվածի համար իրականացվել են հիմնականում ոչ մրցութային գնման ընթացակարգերով: Մինչդեռ, նման խոշոր գնումներ կատարելիս, ըստ Գնումների մասին օրենքի, նախընտրելի է մրցույթի հայտարարումը:

Աղյուսակ 2.

Ամանորյա տոնական ձևավորման և միջոցառումների կազմակերպման համար ծախսերը 2018թ.

Պատվիրատուի անվանումը	**Ընտրված մասնակից**	**Գնման ընթացակարգ**	**Գնման առարկայի անվանում**	**Պայմանագրի ընդհանուր գումարը (մլն. դրամ)**
Երևանի քաղաքապետարան	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	ՄԱ	Երևան քաղաքի գլխավոր տոնածառի լույսերի վառման հանդիսավոր արարողություն	30
Երևանի քաղաքապետարան	«Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ	ՄԱ	«Էրեբունի-Երևան 2800» տոնական միջոցառումների տարվա ամփոփման, նաև Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնակատարությանը նվիրված տոնական համերգների կազմակերպում	24
Երևանի քաղաքապետարան	«Թիմսերվիս» ՍՊԸ	ԲԸ	Երևան քաղաքում ամանորյա ձևավորման ծառայություններ (լուսադիոդային լամպերով)	21,99
Երևանի քաղաքապետարան	«Էլիտա Էսվե» ՍՊԸ	ԲՄ	Տոնածառի տեղադրման , ամանորյա միջոցառման և 200 հյուրերի հյուրասիրության կազմակերպում (Էրեբունի վարչական շրջան)	9,99

Երևանի քաղաքապետարան	«Էլիտա Էսվե» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում և միջոցառումների կազմակերպում (Շենգավիթ վարչական շրջան)	9,95
Երևանի քաղաքապետարան	Արմքոմփվիններ ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում և միջոցառումների կազմակերպում (Նոր Նորք վարչական շրջան)	8
Երևանի քաղաքապետարան	Լամեքս ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Ավան վարչական շրջան)	6
Երևանի քաղաքապետարան	Բրուս ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Աջափնյակ վարչական շրջան)	5,7
Երևանի քաղաքապետարան	Սլայդ Արտ ՍՊԸ	ՄԱ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Ավան վարչական շրջան)	5,5
Երևանի քաղաքապետարան	«Էլիտա Էսվե» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորման ծառայություններ (Արաբկիր վարչական շրջան)	5,31
Երևանի քաղաքապետարան	Սիթիթայմ ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Կենտրոն վարչական շրջան)	5
Երևանի քաղաքապետարան	Ալեքսանդր Միերյան Ա/Ձ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում և միջոցառումների կազմակերպում (Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան)	3,82
Երևանի քաղաքապետարան	«Էլիտա Էսվե» ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում և միջոցառումների կազմակերպում (Նուբարաշեն վարչական շրջան)	2,27
Երևանի քաղաքապետարան	Հաղթանակ 2000 ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Նորք-Մարաշ վարչական շրջան)	1,2

Երևանի քաղաքապետարան	Ալեքսանդր Միերյան Ա/Ձ	ԲՄ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում (Արաբկիր վարչական շրջան)	1,94
Երևանի քաղաքապետարան	Մադել ՍՊԸ	ԲՄ	Ամանորյա տոնական ձևավորում (Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան)	1,46
ՀՀ պաշտպանության նախարարություն	Արասո ՍՊԸ	ԳՀ	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ, Ամանորին նվիրված միջոցառում	12,42
Վանաձորի համայնքապետարան	Սմարթ Սոլուշնս ՍՊԸ	ԳՀ	Ամանորյա միջոցառումների կազմակերպում	4,48
Աշտարակի համայնքապետարան	Ռուզաննա Պարոնյան Ա/Ձ	Էլ. աճ	Աշտարակ քաղաքի գլխավոր տոնածառի լույսերի վառման հանդիսավոր արարողություն	1,78
Մասիսի համայնքապետարան	«Նավիտա» ՍՊԸ	ՄԱ	Մասիս քաղաքի գլխավոր տոնածառի մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ	0,99
Մասիսի համայնքապետարան	« Մասիսի մշակույթի կենտրոն» ՓԲԸ	ՄԱ	ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքում ամանորյա միջոցառման կազմակերպման ծառայությունների ձեռքբերում	0,65
«Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Էլեկտրիկ» ԱԿ	ՄԱ	Տոնածառի և զարդարանքի զանազան պարագաներ	0,13
«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	«Պոպո գրուպ» ՍՊԸ	ՄԱ	Տոնածառ	0,06
Ընդամենը				**162,5**

2019թ. դիտարկվող ժամանակահատվածում ձեռք է բերվել շուրջ 27.7 մլն դրամի ձեռքի ժամացույցներ, որոնց պատվիրատուներն են եղել՝ Պաշտպանության նախարարությունը, Ազգային Ժողովը, Քննչական կոմիտեն,

Արդարադատության նախարարությունը և Հատուկ քննչական ծառայությունը: Այս ժամացույցների ճնշող մեծամասնությունը՝ 97%, ձեռք են բերվել «Էյ Դաբլյու Այ Գրուպ» ՓԲԸ-ից:

Աղյուսակ 3.

Ժամացույցներ ձեռքբերող պատվիրատուների խոշորագույն 5-յակը

Խոշոր Պատվիրատուներ	**2018**		**Խոշոր Պատվիրատուներ**	**2019**	
	Մլն դրամ	**Մասնա-բաժինը, %**		**Մլն դրամ**	**Մասնա-բաժինը, %**
Պաշտպանության նախարարություն	5.7	34	Պաշտպանության նախարարություն	10.2	37
Ոստիկանություն	5.6	33	Ազգային Ժողով	7.2	26
Քննչական կոմիտե	1.6	9	Քննչական կոմիտե	7.2	26
Արդարադատության նախարարություն	1.2	7	Արդարադատության նախարարության	1.5	5
Հատուկ քննչական ծառայություն	0.9	5	Գլխավոր դատախազություն	0.9	3
Ընդամենը	**16.9**	**100**	**Ընդամենը**	**27.7**	**100**

Աղյուսակ 4.

Ժամացույցներ ձեռքբերող մատակարարների խոշորագույն 5-յակը

Խոշոր Մատակարարներ	**2018**		**Խոշոր Մատակարարներ**	**2019**	
	Մլն դրամ	**Մասնա-բաժինը, %**		**Մլն դրամ**	**Մասնա-բաժինը, %**
Էյ Դաբլյու Այ Գրուպ ՓԲԸ	9.8	58	Էյ Դաբլյու Այ Գրուպ ՓԲԸ	26.8	97
Երևանի Ոսկերչական Գնոմոն գործարան	5.5	33	Ա/Ձ Աննա Սահակյան	0.5	2
Հայկ Բալայան	1	6	Իմպորտ Թրեյդ	0.4	1

Կոլլաժ ՍՊԸ	0.6	4	-	-	-
-	-	-	-	-	-
Ընդամենը	**16.9**	**100**	**Ընդամենը**	**27.7**	**100**

Մեր դիտարկվող ժամանակաշրջանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2018թ ձեռք է բերվել մոտ 59.8 մլն դրամի կոնյակ, ինչը 7.6 մլն դրամով գերազանցում է 2019թ. -ի կոնյակների գնումները (Աղյուսակ 5) :

2018թ. ամենաշատը կոնյակների և այլ ալկոհոլային խմիչքների ձեռքբերման համար տրամադրել է Ազգային ժողովը՝ մոտ 17.6 մլն դրամ պաշտոնական պատվիրակությունների ընդունելության համար խմիչք-հուշանվերներ գնելու համար: Կոնյակների հիմնական մատակարարը եղել է ԱԴՏՄ Հարավ ՍՊԸ:

Կոնյակների մյուս խոշոր պատվիրատուները եղել են Պաշտպանության նախարարությունը, Պետական Եկամուտների Կոմիտեն, Արտաքին գործերի նախարարությունը և Վարչապետի աշխատակազմը:

Աղյուսակ 5.

Կոնյակի և այլ ալկոհոլային խմիչքներ ձեռքբերող պատվիրատուների խոշորագույն 5-յակը

Խոշոր Պատվիրատուներ	**2018**		**Խոշոր Պատվիրատուներ**	**2019**	
	Մլն դրամ	**Մասնա-բաժինը, %**		**Մլն դրամ**	**Մասնա-բաժինը, %**
Երևանի Քաղաքապետարան	11.9	20	Ազգային Ժողով	17.6	34
Պաշտպանության նախարարություն	11.3	19	Պաշտպանության նախարարություն	16.1	31
Արտաքին գործերի նախարարություն	10.2	17	Պետական եկամուտների կոմիտե	7.3	14
Հաշվարկային կենտրոն ՓԲԸ	5	8	Արտաքին գործերի նախարարություն	4	8
Վարչապետի աշխատակազմ	4.7	8	Վարչապետի աշխատակազմ	1.7	3
Ընդամենը	**59.8**	**100**	**Ընդամենը**	**52.2**	**100**

Աղյուսակ 6.

Կոնյակի և այլ ալկոհոլային խմիչքներ ձեռքբերող մատակարարների խոշորագույն 5-յակը

Խոշոր Մատակարարներ	**2018**		**Խոշոր Մատակարարներ**	**2019**	
	Մլն դրամ	**Մասնա-բաժինը, %**		**Մլն դրամ**	**Մասնա-բաժինը, %**
Արտեքսիմ ՍՊԸ	20.3	34	ԱԴՏՄ Հարավ ՍՊԸ	37.5	72
ԱԴՏՄ հարավ ՍՊԸ	17.9	30	Արբրեն ՍՊԸ	7.4	14
Երևան Կոնյակի Գործարան	12	20	Արտեքսիմ ՍՊԸ	4.9	9
Արբրեն ՍՊԸ	5.3	9	Ագուլիս Մեկ ՍՊԸ	1.8	3
Ագուլիս Մեկ ՍՊԸ	1.9	3	Ուայն Թայմ ՍՊԸ	0.3	1
Ընդամենը	**59.8**	**100**	**Ընդամենը**	**52.2**	**100**

Ինչ վերաբերվում է ծաղիկների գնումներին, համաձայն գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների, տարեկան կտրվածքով 2018թ. և 2019թ. պետական կառույցները հատկացրել են համապատասխանաբար 60.6 մլն և 35.5 մլն դրամ: Ի տարբերություն տարեկան տվյալների, մեր դիտարկվող ժամանակահատվածում 2018թ. 25.1 մլն-ով ավելի շատ ծաղիկներ են գնվել քան 2019թ. (Աղյուսակ 7):

2019թ. առանձնապես աչքի է ընկել Արտաքին գործերի նախարարության ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերման խոշոր պայմանագրերով: Դիտարկվող ժամանակահատվածում ծաղիկների հաջորդ խոշոր գնորդը եղել է Պաշտպանության նախարարությունը՝ մոտ 7.7 մլն դրամի ծաղիկների և ծաղկեպսակների գնումներով:

Աղյուսակ 7.

Ծաղկեփնջեր և ծաղկային կոմպոզիցիաներ ձեռքբերող պատվիրատուների խոշորագույն 5-յակը

Խոշոր Պատվիրատուներ	**2018**		**Խոշոր Պատվիրատուներ**	**2019**	
	Մլն դրամ	**Մասնա-բաժինը, %**		**Մլն դրամ**	**Մասնա-բաժինը, %**

Երևանի Քաղաքապետարան	23.6	39	Արտաքին գործերի նախարարություն	18.3	52
Պաշտպանության նախարարություն	22.7	37	Պաշտպանության նախարարություն	7.7	22
Ոստիկանություն	6.2	10	Ոստիկանություն	3.5	10
Արտաքին գործերի նախարարություն	2.8	5	Ազգային Ժողով	2	6
Գյումրիի համայնքապետարան	2	3	Երևանի Քաղաքապետարան	1.8	5
Ընդամենը	**60.6**	**100**	Ընդամենը	**35.5**	**100**

Աղյուսակ 8.
Ծաղկեփնջեր և ծաղկային կոմպոզիցիաներ ձեռքբերող մատակարարների խոշորագույն 5-յակը

Խոշոր Մատակարարներ	**2018**		**Խոշոր Մատակարարներ**	**2019**	
	Մլն դրամ	**Մասնա-բաժինը, %**		**Մլն դրամ**	**Մասնա-բաժինը, %**
Ֆիոնա Ֆլորա ՍՊԸ	24.8	41	Էնի Ռոուզ ՍՊԸ	17.7	50
Է. Ֆ. Դ. ՍՊԸ	18.4	30	Իմպորտ Թրեյդ	7.7	22
Մանուէլ ՍՊԸ	6.2	10	Մայ Ռոուզ	3	8
Դառես ՍՊԸ	4	7	Ֆիոնա Ֆլորա ՍՊԸ	2.6	7
Էնին Ռոուզ ՍՊԸ	2.6	4	ԱՁ Նարեկ Հարությունյան	1.2	3
Ընդամենը	**60.6**	**100**	**Ընդամենը**	**35.5**	**100**

Համաձայն գնումների հաշվետվողականության կայքում զետեղված տվյալների, մեր իրականացրած մանրամասն ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ մեր դիտարկվող ժամանակահատվածում պետական մարմինները 2018թ. (38.1 մլն դրամ) մոտ 2.6 անգամ ավելի շատ գումար են ծախսել հուշանվերների ձեռքբերման վրա, քան 2019թ (98.1 մլն դրամ) (Աղյուսակ 9):

Այս ժամանակաշրջանում, առավել շռայլ է գտնվել Պաշտպանության նախարարությունը՝ 2019թ ծախսելով մոտ 44.5 մլն դրամ և 2018թ 8.5 մլն դրամ հուշանվերների ձեռքբերման համար:

Աղյուսակ 9.

Հուշանվերներ ձեռքբերող Պատվիրատուների խոշորագույն 5-յակը

Խոշոր Պատվիրատուներ	**2018**		**Խոշոր Պատվիրատուներ**	**2019**	
	Մլն դրամ	**Մասնա-բաժինը, %**		**Մլն դրամ**	**Մասնա-բաժինը, %**
Ոստիկանություն	13.7	36	Պաշտպանության նախարարություն	44.5	
Պաշտպանության նախարարություն	8.5	22	Ազգային Ժողով	17.3	
Ազգային Ժողով	6.6	17	Ոստիկանություն	12.2	
Երևանի Քաղաքապետարան	2.2	6	Վարչապետի աշխատակազմ	8.9	
Սահմանադրական դատարան	1.1	3	Պետական եկամուտների կոմիտե	5.1	
Ընդամենը	**38.1**	**100**	**Ընդամենը**	**98.1**	**100**

Հաջորդը Ազգային ժողողվն է, որը 2018թ և 2019թ. հատկացրել է համապատասխանաբար 6.6 և 17.3 մլն դրամ հուշանվերներ ձեռքբերելու նպատակով:

Աղյուսակ 10.

Հուշանվերներ ձեռքբերող մատակարարների խոշորագույն 5-յակը

Խոշոր Մատակարարներ	**2018**		**Խոշոր Մատակարարներ**	**2019**	
	Մլն դրամ	**Մասնա-բաժինը, %**		**Մլն դրամ**	**Մասնա-բաժինը, %**
Պրոսպեր ՍՊԸ	8.9	23	Երևանի Ոսկերչական գործարան-1 Գնոմոն ԲԲԸ	21.3	

Երևանի Ոսկերչական գործարան-1 Գնոմոն ԲԲԸ	8.5	22	ԱՏԱ ՍՊԸ	18.6	
ՎիԷլՎիՍենթր ՍՊԸ	4	10	Նոյան Տապան ՍՊԸ	7.9	
Արեվ-արթ Գելըրի ՍՊԸ	2.6	7	Կերբեդանց Ձեյ Դաբլ Յու	5.8	
Կոլլաժ ՍՊԸ	1.1	3	ՎիԷլՎիՍենթր ՍՊԸ	5.5	
Ընդամենը	**38.1**	**100**	**Ընդամենը**	**98.1**	**100**

Առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել ներկայացուցչական ծառայությունների գնման ուղղությամբ խոշոր պատվիրատու հանդիսացող կառույցների ներկայացուցչական գնումների բաշխմանն ըստ ուղղությունների, որի ուսումնասիրության արդյունքները ներկայացրել ենք Գրաֆիկ 1-3-ում:

Գրաֆիկ 1. Պաշտպանության նախարարության ներկայացուցչական ծառայությունների բաշխումն ըստ ուղղությունների[1]

[1] https://www.armeps.am/ppcm/public/contracts



Ինչպես տեսնում ենք որոշ ուղղություններով ծախսերը ավելացել են, ինչպես օրինակ՝ պատվիրակությունների ընդունման ժամանակ ֆուրշետների, տրանսպորտի և թարգմանչական ծառայությունների ծախսերը: Ավելացել են նաև հուշանվերների, խորհրդանշական նվերների (այդ թվում՝ ժամացույց, նարդի, շախմատ), մեդալների և կրծքանշանների ձեռքբերմանն ուղղված ծախսերը:

2019 թվականին Ոստիկանության ներկայացուցչական ծախսերը նվազել են 10 միլիոն դրամով և կազմել են 84 միլիոն դրամ: Ստորև ներկայացված Գրաֆիկում պատկերված են ներկայացուցչական ծառայությունների կազմը:

Գրաֆիկ 2. Ստիկանության ներկայացուցչական ծախսերն ըստ առանձին հոդվածների, 2018-2019թթ[2]



Այսպիսով, ներկայացուցչական ծառայություններին ուղղված ծախսերը նվազել են մեծամասամբ մեդալների և կրծքանշանների գնման ծավալների նվազման հաշվին: Մեծ հոդված են կազմում երեխաների համար խաղերի կազմակերպումը և խաղալիքների ձեռքբերումը: 2019թվականին ավելացել է ճաշկերույթների և ֆուրշետների կամզմակերպման ծախսերը (9.6միլիոն դրամով) և կոնյակի ձեռքբերման ծախսերը (7.7 միլիոն դրամով):

[2] https://www.armeps.am/ppcm/public/contracts

2019 թվականին Երևանի Քաղաքապետարանի ներկայացուցչական ծախսերը նվազել են 10 միլիոն դրամով և կազմել են 84 միլիոն դրամ: Ներկայացուցչական ծառայությունների կազմը ներկայացված է Գրաֆիկ 3-ում:

Գրաֆիկ 3. Երևանի Քաղաքապետարանի ներկայացուցչական ծախսերն ըստ առանձին հոդվածների, 2018-2019թթ[3]



Այսպիսով, 2019թ ներկայացուցչական ծառայությունների խոշոր հոդված են կազմում Ամանորյա տոներին նվիրված միջոցառումների կազմակերպումը՝ 244միլիոն դրամ ընդամենը արժողությամբ:

[3] https://www.armeps.am/ppcm/public/contracts